Հ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ, 17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի ինքնատիպ վերլուծություն, *Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1983, 415 էջ։*

Հայոց պատմության համար XVII դարն ունեցել է բացառիկ կարևորություն, սակայն մինչև վերջերս հայագիտության մեջ նկատվում էր մի շատ լուրջ բաց. անբավարար էր ուսումնասիրված ինչպես այդ դարի հայ քաղաքական ու տնտեսական, այնպես էլ գիտամշակութային կյանքի և հատկապես փիլիսոփայական մտքի պատմությունը։ Մենագրության թեման ընտրելով XVII դ. հայ փիլիսոփայության պատմությունը, Հ. Միրզոյանը հետապնդել է մեկ հիմնական նպատակ՝ ըստ կարելվույն լրացնել հայագիտության մեջ նկատվող այդ լուրջ բացը։ Դրանով նա ստանձնել է շնորհակալ մի գործ, որը, պետք է ասել, նա կատարել է գիտական պատասխանատվության բարձր զգացումով և բծախնդրության հասնող գիտական բարեխղճությամբ՝ ցուցաբերելով ոչ միայն այդ դարի հայ քաղաքական, սոցիալ-տնտեսական ու գիտամշակութային կյանքի լավատեղյակություն, այլև հայ և համաշխարհային փիլիսոփայության պատմության քաջ իմացություն։ Փիլիսոփայական մինչ այժմ հայտնի սկզբնաղբյուրները մասնագիտական բարձր մակարդակով վերլուծելու և արժեքավորելու կարողությունից բացի Հ. Միրզոյանը դրսևորել է նաև պատմաբանասիրական ու աղբյուրագիտական հետազոտությունները կատարելու որոշակի ձիրք ու հմտություն, որը տվյալ դեպքում խիստ կարևոր է։ Խնդիրն այն է, որ XVII դարի փիլիսոփայական շատ ու շատ սկզբնաղբյուրներ երկար ժամանակ մնում էին չուսումնասիրված ու չգնահատված, որի պատճառով էլ անբավարար է ուսումնասիրվել կամ, ըստ էության, ճիշտ չի գնահատվել այդ դարի հայ փիլիսոփայական մտքի պատմությունը։ Ըստ այդմ էլ գրախոսվող մենագրության ամենակարևոր արժանիքներից մեկը պետք է համարել նաև այն, որ հեղինակը դերադասել է գնալ ոչ թե տրորված ճանապարհով, այլ հայագիտության մինչ այդ ունեցած դրական ձեռքբերումների օգտագործմամբ բացել է սեփական արահետ, տեսել է ուրիշների չտեսածը, հանրահայտի մեջ բացահայտել է անհայտը։ Ելակետում ճիշտ որոշելով իր անելիքը, արդյունքում նա հասել է գիտական լուրջ նվաճումների։ XVII դ. հայ փիլիսոփայական մտքի զարգացման պատմական պատկերը վերհանելու համար Հ. Միրզոյանը ստիպված է եղել, ինչպես ինքն է գրում, «օգտագործելու ոչ միայն զուտ փիլիսոփայական ու տրամաբանական, այլև բնագիտական, պատմագիտական, աշխարհագրական, լեզվաբանական, ճարտասանական, գեղարվեստական բնույթի երկեր, ինչպես նաև ճանապարհորդական հուշագրություններ ու օրագրեր, ձեռագիր ու տպագիր գրքերի առաջաբաններ, վերջաբաններ ու հիշատակարաններ, ինքնակենսագրություններ ու նամակներ և այլ կարգի նյութեր» (էջ 5)։ Դրանց զգալի մասը առաջին անգամ է դրվում շրջանառության մեջ և, պետք է ասել, ընդհանուր առմամբ ճիշտ է գնահատվում։

Ղեկավարվելով մշակույթի, ի մասնավորի փիլիսոփայության, պատմության ուսումնասիրության մարքս-լենինյան գիտական մեթոդաբանությամբ, Հ. Միրզոյանը շանացել է XVII դ. հայ մտածողների աշխարհայացքը ներկայացնել փիլիսոփայական լայն ֆոնի վրա՝ հստակելով, թե ինչ են վերցրել նրանք հայ և համաշխարհային փիլիսոփայության հարուստ գանձարանից և ինչ նոր բան են ավելացրել այդ իսկ գանձարանին։ Հեղինակի կողմից հաճախ կատարած փիլիսոփայապատմական հետաքրքիր էքսկուրսները արժեքավոր են ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային փիլիսոփայության պատմության տեսակետից։ Ուշադրության է արժանի և այն, որ հեղինակը XVII դարի հայ փիլիսոփաների աշխարհայացքը ներկայացնում է մի կողմից՝ իր դարն ապրած, բայց և ավանդույթի ուժով գոյատևող կրոնական աշխարհայեցողության, իսկ մյուս կողմից նոր ձևավորվող գիտական աշխարհընկալման պայքարի բովում՝ համոզիչ կերպով ցույց տալով, թե որտեղ և երբ են նրանք պարտադիր տուրք տալիս իր դարն ապրածին, իսկ որտեղ և երբ են հակադրվում նրան։

Շնորհիվ այս ամենի, Հ. Միրզոյանի մենագրությունն աչքի է ընկնում գիտական հարուստ և բազմաթիվ նորություններով։ Հարկ չհամարելով թվարկել դրանք, բերենք միայն մեկ օրինակ։ Ելակետ ունենալով Պլատոնի իդեալիզմի արիստոտելյան քննադատության Վ. Ի. Լենինի հանրահայտ գնահատականը, Հ. Միրզոյանը նույն համանմանությամբ իրավացիորեն փորձում է հայ և հռոմեական եկեղեցիների միջև մղված դավանաբանական դարավոր պայքարի մեջ տեսնել հակակրոնական դրական գծեր (տե՛ս էջ 53—61)։ Իսկ եթե նկատի ունենանք, որ հռոմեա-

կան հկեղեցու դեմ հայերից բացի նման պայքար մղել են նաև ՍՍՀՄ և աշխարհի շատ այլ ժողովուրդներ, ապա պարզ կդառնա մենագրության մեջ այս հարցադրման տեսական ու ճանաչողական կարևոր նշանակությունը։

Ներածության մեջ հիմնավորելով ընտրած թեմայի գիտական կարևորությունը, այժմեականությունն ու իր անելիքները, հեղինակը բացահայտել է տվյալ թեմայի ուսումնասիրության հետ կապված դժվարություններն ու դրանց հաղթահարման եղանակները, առաջադրված հարցերի մեթոդական հիմքերն ու հետազոտության մեթոդի հիմնական սկզբունքները, ինչպես նաև տվել է հրապարակի վրա առկա գիտական գրականության վերլուծությունը՝ ուշադրություն դարձնելով հատկապես XVII դ. հայ փիլիսոփայության գնահատության հարցում այլ հետազոտողների կողմից, իր կարծիքով, թույլ տրված սխալներին ու անճշտություններին։ Ընդհանուր առմամբ ճիշտ համարելով այդ գրականության վերլուծությունը, առանձին դեպքերում, սակայն, նկատվում է ծայրահեղ մոտեցում։

Առաջին գլխում, որը գրախոսվող մենագրության ամենածավալուն բաժինն է, ընդհանուր գծերով ներկայացված է XVII դարում Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական դրությունը, գիտամշակութային կյանքը, թարգմանական գրականությունը (իհարկե, հատուկ ուշադրություն դարձնելով փիլիսոփայական բիչ թե շատ արժեք ունեցող թարգմանությունների վրա) և վերջապես՝ հայ փիլիսոփայական մտքի անցյալի ընդհանուրված ավանդույթների վերականգնման բարդ ու տանջալից պրոցեսը։ Երկրորդ գլխում հեղինակն անդրադառնում է XVII դ. հայ աղդային-ազատագրական մտքի պատմության ցարդ չուսումնասիրված կամ թերի ուսումնասիրված ինչ-ինչ հարցերի, ինչպես նաև վերլուծում է դարի հայ մտածողների կողմից սոցիալ-դասակարգային պայքարի մասին արտահայտված մտքերն ու տեսակետները։ Երրորդ գլխում վերլուծվում են աստծու և բնության, մատերիայի և ձևի, մարմնի և հոգու փոխհարաբերության հարցերում XVII դարի հայ մտածողների ըմբռնումները։ Չորրորդ գլխում դիտարկվում են աշխարհի ճանաչելիության, ճանաչողության աստիճանների, դրանց կապի ու փոխհարաբերության, առանձին առարկաների և ընդհանուր հասկացությունների փոխհարաբերության և գիտությունների դասակարգման մասին հայ իմաստասերների դրսևորած պատկերացումները։ Հինգերորդ գլուխը նվիրված է տրամաբանության առարկայի, դերի ու խնդիրների և մտածողության ձևերի մասին XVII դարի հայ տրամաբանների արտահայտած տեսակետների վերլուծությանը։

Նպատակ չունենալով մեկ առ մեկ թվարկելու գրախոսվող մենագրության բոլոր արժանիքները, բերած նորությունները ու տեսական կարևոր հարցադրումները, ասենք միայն, որ այն գրված է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով, լեզվական հիանալի կուլտուրայով, սկզբնաղբյուրային հարուստ նյութի, ինչպես նաև հայ և համաշխարհային փիլիսոփայության պատմության լավ իմացությամբ։ Մենագրությունն՝ աչքի է ընկնում թարմ ու համարձակ հարցադրումներով և դրանց տրված պատասխանների գիտականությամբ, ունի բարեխղճորեն կազմված գիտական ապարատ և տեխնիկական լավ ձևավորում։ Անշուշտ, կարելի է վիճարկել Հ. Միրզոյանի ինչ-ինչ հարցադրումները, չհամաձայնել նրա առանձին մտքերի ու տեսակետների հետ, բայց ներկա պարագային դա, մեր կարծիքով, պետք է համարել գրախոսվող մենագրության ոչ թե թերությունը, այլ առավելությունը։ Այլապես էլ ինչ գիտական մենագրություն, եթե այն չպետք է առաջ բերի տարակարծություններ ու կարծիքների բախում։ Հենց այդ աղերսով էլ ցանկանում ենք անել մի քանի դիտողություն ու առաջարկություն, որոնց հաշվառումը, կարծում ենք, օգտակար կլինի հեղինակի հետագա գիտական աշխատանքի համար։

1. Մեր ամենահիմնական դիտողությունը վերաբերում է մենագրության ընդգրկած ժամանակահատվածին։ Բանն այն է, որ Հ. Միրզոյանը XVII դ. համարում է նոր շրջանի հայ փիլիսոփայության սաղմնավորման ժամանակաշրջան։ Մինչդեռ, մեր կարծիքով, նոր շրջանի հայ փիլիսոփայության, այսինքն՝ բուրժուական մտածողության սաղմնավորման ու ձևավորման պրոցեսը, ըստ էության, տևել է մինչև XVIII դ. կեսերը, մինչև հնդկահայ լուսավորիչների երևան գալը։ Ուստի ճիշտ կլիներ XVII դ. սկսված պատմական պրոցեսի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար ընդլայնել գրախոսվող մենագրության ընդգրկած ժամանակահատվածը՝ ներառնելով XVIII դ. առաջին կեսի հայ փիլիսոփայական մտքի պատմությունը, որն, ի դեպ, առայժմ մնում է չուսումնասիրված ու չգնահատված։

2. Թվում է, XVII դ. հայ փիլիսոփայության պատմությանը նվիրված աշխատության մեջ կարիք չկար մանրամասնորեն անդրադառնալու Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու գիտամշակութային կյանքին։ Կարծում ենք, դա կարելի էր անել ավելի սեղմ ու հա-

կիրճ ձևով, մինչդեռ, ընդհակառակն, պետք էր ավելի հանգամանորեն ներկայացնել նույն գլխի վերջին պարագրաֆում քննարկվող հարցերը և ամենից առաջ լվովում կաթոլիկ միսիոներների հետ Էջմիածնի նվիրակների ունեցած բանավեճը։

3. Նշեցինք, որ գրախոսվող մենագրությունն աչքի է ընկնում ընդգրկված հարցերի բազմազանությամբ, այդ հարցերին տրված պատասխանների լայնությամբ ու խորությամբ։ Անշուշտ, քննարկված հարցերի բազմազանությունը թելադրված է ընտրած թեմայով և դեռ հնարավոր էր ավելի մեծացնել դրանց թիվը։ Օրինակ, կարելի էր վերլուծել նաև խնդրո առարկա դարի հայ մտածողների գեղագիտական ու բարոյագիտական հայացքները, բայց հազիվ թե դա հնարավոր լիներ կատարել ոչ ի վնաս մենագրության բովանդակության։ Ուստի, մեր կարծիքով, հիշատ է վարվել հեղինակը, որ այդ հարցերը գիտակցաբար թողել է մի կողմ, միայն թե պրան պետք էր տալ ավելի պարզորոշ հիմնավորում։

4. Թեև մենագրությունն, ինչպես ասացինք, գրված է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով ու լեզվական փայլուն կուլտուրայով, բայց և այնպես նրանում տեղ են գտել լեզվաոճական առանձին անճշտություններ ու անհարթություններ (տե՛ս էջ 18, 45, 101, 142)։

Գրախոսվող մենագրության մեջ կարելի է տեսնել նաև այլ կարգի թերություններ (կատեգորիկ պնդումներ, առարկություն վերցնող մտքեր ու փաստական մանր անճշտություններ), բայց ներկա դեպքում դա չէ մեր հիմնական խնդիրը։

Ամրողջության մեջ վերցրած Հ. Միրզոյանի «17-րդ դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծությունը» մենագրությունը իր ընդգրկած հարցերի բազմապիսությամբ, փաստական հարուստ առաձով և մանավանդ պրոբլեմների խոր վերլուծությամբ լուրջ ներդրում է հայ փիլիսոփայության պատմության մարքսիստական ուսումնասիրության ասպարեզում։

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ